



Գ Ա Ղ Ո Ւ Թ Ա Հ Ա Յ Կ Յ Ա Ն Ք

„ՄԻ ԱՆՀԱՅՑ ԶԵՌԱԳԻՐ ՏԱՂԱՐԱՆ“*)

Վաստակավոր և հմուտ բանասեր Պ. Արամ Երեմյանը, Թեհրանի հայոց «Դարբան» դպրոցի տեսուչը, դեռ երեկ էր, որ գրական հրապարակի վրա դրեց Իրանահայ աշուղական գրականության և հասարակության կյանքը պատկերող բանասիրական մի արժեքավոր ուսումնասիրություն: Դա «Աշուղ Յարբուն օղլի» խորագրով գիրքն է, որ պատկերում է 19-րդ դարում ապրող բեղմնավոր և անհայտ մի աշուղի դիմագիծը: Այսօր էլ նա լույս է ընծայել նույնքան ուշագրավ մի նոր երկ: Դա «Մի անցյալ ձեռագիր տաղարան» վերնագրով գրքույկն է, որ իր բովանդակությամբ ընդգրկում է 17-րդ դարի մի անհայտ ձեռագիր տաղարանում ամփոփված երգերը, որ հարգելի բանասերը հայտագործել է Նոր-Ջուլայում: Այդ տաղերն արժանի են ուշադրության նրանով, որ իրենց էությամբ և շոշափած հիմնական հարցերով ունեն հասարակական բնույթ: Այդ արժեքավոր գրականության պատկերը, անկասկած, այսօր չէինք ունենար և նրանց հեղինակներն էլ կմնային մութի ու մոռացության մեջ, եթե Պ. Երեմյանը չմտածեր դրանց փոշիների տակից լույս հանել և հրատարակել: Շնորհիվ նրա բանասիրական համառորոնների և հետազոտությունների այդ տաղերն ընդմիջտ փրկվել են կորստից: Եվ այդ միայն մի նպատակով, որպեսզի հայ բանասիրական գրականությունը հարստանա և հայ հասարակական կյանքի այս կամ այն մութ երևույթները լուսաբանվեն: Հանուն այդ նպատակի էլ Պ. Երեմյանը և նրա նման անխոնջ, տոկուն, սրտացավ և զոհաբերող գրական մշակները իրենց սիրտը, հոգին և լավագույն ժամերը նվիրում են բանասիրական աշխատանքի: Աշխատում են նրանք խոր հավատով ու համոզմամբ, որպեսզի մեր անցյալի մտավոր գանձերը փրկվեն, որպեսզի հպարտանանք մեր նա-

խահայրերի գրական ժառանգությամբ, որը պատիվ է բերում հայ մշակույթի պատմությանը:

Պ. Երեմյանի հայտաբերած ձեռագրի տաղերը բովանդակության կողմից բաղմաղան են և մեծ մասամբ անդրադառնում են կրոնա-բարոյական նյութերի շուրջ: Հատուկ ուշադրության արժանի են նաև միջնադարյան բանաստեղծությունները հիշեցնող աշխարհիկ երգերը, որոնք անդրադառնում են գինու, ուրախության, սիրո, զարնան, վարդի և բլբուլի շուրջ: Տաղաբաններից հայտնի են Խղնուկ Ղազարը, մանավանդ Երեմյանի տաղասաց Սիմեոնը, 18-րդ դարի հայոց կաթողիկոսը, կուլտուրական մի պայծառ դեմք, որ Հայաստանում հիմնել է առաջին տպարանը: Նույնպես նա է, որ էջմիածնում հիմք է դրել թղթի գործարանի, կառուցել է դպրոց և բաղմաթիվ շինություններ, բարեկարգել է տոմարը և մեծ զարկ է տվել ժամանակի ուսման ու կրթական վեհ գործին: Այս բոլորի վրա ավելացնենք նրա բանաստեղծական ձիրքը: Գրականագետ կաթողիկոսին խորապես վշտացրել են պանդուխտ, տառագիր հայ ժողովրդի կրած այն տառապանքներն ու զրկանքները, որ պատճառել են նրան «այլահաւատ» իշխողները: Ժամանակի մոռյլ դեպքերին ակնատես Սիմեոնը խոր հուզումով արձանագրել է ժողովրդի հալածանքները: Այդ երևույթներն էլ արժեքավորում են նրա գրական դիմագիծը:

Գրքում ուրույն տեղ են գրավում մանավանդ գինու մասին շարահյուսված տաղերը: Դրանք ժողովրդական պարզ լեզվով կառուցված երգեր են, որոնք կամ անուշ, զորեղ, վառ գինու, կարասի, փարշի, թասիթի, ֆինճանների գովքն են արել և կամ ընդգծել են խմիչքի շատ գործածությունից առաջացած բացասական, վնասակար և քայքայիչ հետևանքները: Պ. Երեմյանի գրքույկն ուշագրավ է նրանով, որ նա վերլուծության է ենթարկել հայ և օտար նշանավոր գիներգու-

*) Ա. Երեմյան. — Մի անցյալ ձեռագիր տաղարան, 1947 թ. Թեհրան:

ների երգերը: Այնտեղ հրապարակ են գալիս Հովհաննես Բլկուրանցին, Սարկավագ Բերդակցին, Աստվածատուրը, Մարտիրոս Խաչատուրյանը, Էրզրումցի Տատուրը, Նահապետ Քուչակը, Մկրտիչ Նաղաշը, Գալուստ Կալ-ժակը, Նաղաշ Հովնաթանը և ուրիշներ, որոնք կամ նկարագրել են գինովության տր-խուր հետևանքները, նշել են խմիչքի վնասակար և կործանիչ դերը, ընդգծելով, թե «գինին մայր է ամեն մեղաց»¹ իսկ «արբեցությունը խիստ չար է»² և կամ, ընդհակառակը, երգել են անուշ գինին և խնջույքը, դրվատել են կարմիր ու սպիտակ վարդերով ու ծաղիկներով զարդարված լիքը կարասը: Գրքում հանդիպում ենք նաև երգիչների, որոնք³ կարծես, չեն հետաքրքրվել իրենց ժամանակի հասարակական կյանքով և հանդիսացել են միայն սիրո, ուրախության և աշխարհային վայելքների երգիչ: Երգել են նրանք գարնանային գեղածիծաղ բնությունը, սերն ու դինին: Սրանք են, ահա, Երեմյանի հայտարարած ձեռագրի ուղագրով տաղերը, որոնցից մի քանիսը, հարգելի բանասերի վկայությամբ, ենթարկվել են փոփոխության, կորցնելով իրենց պարզ ու հարազատ կառուցվածքից որոշ նրբություններ, մի հանգամանք, որ ընդգծում է անտիպ տաղերի տպագրության հրամայողական պահանջը և որի իրագործումն անհրաժեշտ է վարիանտների համեմատության համար:

Այստեղ նկատենք մի հանգամանք ևս: Ուսումնասիրված տաղերգուներն արժեքավոր են նրանով, որ մտավորապես ավելի բարձր կանգնած լինելով իրենց ժամանակի հասարակությունից և տոգորված լինելով առաջադիմական գաղափարներով, ձգտել են մի վեհ նպատակի— պայքարել ժողովրդի մեջ դարերի ընթացքում կուտակված արատների և նրա կենցաղի բացասական գծերի դեմ, միաժամանակ աշխատել են կրթել, դաստիարակել մարդկանց, ազնվացնել նրանց

սրտերն ու հոգիները⁴ առաջնորդելով բոլորին դեպի բարին, գեղեցիկն ու վսեմը: Ավելի բնորոշն այն է, որ նրանցից մի քանիսը ժողովրդի թերություններն ու պակասությունները քննադատելիս իրենց շեշտը դրել են գլխավորապես գինեմոլության և հարբեցությունից վրա: Նրանք հասարակական խնջույքներում և հանդեսներում խոր ցավով տեսել են հարբեցողների տխուր ու մոռյալ պատկերը, տեսել են, որ շատերը ոչ միայն մոռի են խմիչքի, այլ և խմելաբանության վնասակար ճանապարհով քայլում են դեպի դժբախտություն: Հասարակական այդ վնասակար արատները վերացնելու համար տաղաբաններն իրենց երգերով հորդորել են, խրատել մարդկանց հեռու մնալ խմիչքի գործածությունից: Նույնիսկ դառն հեգնության են ենթարկել գինեմոլներին ու հարբեցողներին, և վերջապես, քննադատել են բոլոր նրանց, որոնք ապրում են միայն իրենց գինի կյանքով, որոնք չունեն հասարակական փիհ, բարձր իդեալներ և անտարբեր են դեպի ժողովուրդը: Առհասարակ, տաղաբանների կարծիքով, իսկական անհատները միայն նրանք են, որոնք ոչ միայն ունեն համեստ, առաքինի կենցաղ, այլև միշտ կանգնած իրենց կոչման բարձրության վրա, գիտեն նր-վիրվել ժողովրդին և նրա երջանկության համար զոհել իրենց լավագույնը: Այդ տեսակետների մեջ էլ կայանում է տաղանց-ների կոչման և կատարած դերի վեհ նշանակությունը: Այժմ մի հանգամանք պարզ է, որ «Մի անհայտ ձեռագիր տաղաբան»-ը հայ բանասիրական գրականության լավագույն երկերից մեկն է, որի բովանդակու-թյունն ու կառուցվածքը պատիվ են բերում մասնավոր բանասեր և հմուտ քննադատ Պ. Արամ Երեմյանին:

Վ. ՀԱԿՈԲՅԱՆ

(«Հայաստանի կոչնակ» 27 մարտ 1948 թ.)

ԿԱՐՏԻՆԱԼ ԱՐԱՋԱՆՅԱՆԻ ՀՈՎՈՒԱԿԱՆ Բ ՅՈՒՂԹԻՆ ԱՌԹԻՎ

Եգիպտոսի «Արև» լրագրին մեջ կաթողիկե հայ մը կրողոքե Կարտինալ Աղաճանյանի հակաեկեղեցիական ընթացքին դեմ.—

Այս օրերուն, երբ կգտնվինք Սփյուռքի հայության պատմության վեհական մեկ անկյունադարձին առջև, Աղաճանյան Կարտինալ-Պատրիարքը տնգամ մը ևս ապարդիուն կերպով կփորձե ջլատել այն անզսպելի խանդավառությունը, որ կմղե հայրենասերներս դեպի հայրենիք:

Քաջալիքոված այն գնահատություններն, զորս ցույց տվին կաթողիկե մամուլն ու «Յուսարբեր»-ամիտ թերթիքը իր հովուական

նախորդ թուղթին նկատմամբ և անշուշտ պատշաճ նկատելով այն խառնաշփոթու-թյունը, զոր կջանան ստեղծել ափ մը հակա-հայաստանյան տարրեր՝ Կարտինալ Աղա-ճանյան հրապարակ կուգա իր Բ հովուական թուղթով:

Վ. Կարտինալ Աղաճանյանի նոր հովու-ական թուղթին առաջին մտահոգությունն է դարձյալ Հայաստանի մեջ տիրող խղճի ա-զատության հարցը: